

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի «Խնածախի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգի 2-րդ կետի համաձայն «Քարաշենի միջնակարգ դպրոց» և «Խնածախի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմինը՝ միացյալ խորհուրդը հայտարարում է մրցույթ «Խնածախի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը
- 2) ուսումնական հաստատության կառավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

- 1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը
- 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը
- 4) «Խնածախի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ի զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով
- 5) ինքնակենսագրություն

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Խնածախի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում 2021 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 9-ը ներառյալ, ամեն օր ժամը 9⁰⁰-15⁰⁰-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից, Խնածախի միջնակարգ դպրոցի շենքում:

Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Խնածախ, 6-րդ փ. 4 :
Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի նոյեմբերի 23-ին՝ ժամը 12⁰⁰-ին, Խնածախի միջնակարգ դպրոցի շենքում:

Տեղեկությունների համար դիմել՝ խորհրդի կողմից լիազորված անդամ Նվեր Հայրապետյանին: Հեռ.՝ 077 440933, էլ. հասցե՝ khnatsakh@schools.am:

Դպրոցի խորհրդի նախ.

/Ա. Մկրտչյան/